

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

«Տարածաշրջանային Հետազոտությունների Կենտրոն» Հիմնադրամ

հիմնադրամի 2014թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի լրիվ անվանումը՝ «Տարածաշրջանային Հետազոտությունների Կենտրոն» Հիմնադրամ
  - 1.1 Գրանցման համարը – 222.160.124073,
  - 1.2 Գրանցման ամսաթիվը – 2012-07-14
  - 1.3 Գտնվելու վայրը – ՀՀ, ք. Երևան, Արամի 60, բն. 53
  - 1.4 Հեռ. - (+374) 11 709969
  - 1.5 Բջջ. –
  - 1.6 Կայք - [www.regional-studies.org](http://www.regional-studies.org)
  - 1.7 էլ.փոստ– [zara@regional-studies.org](mailto:zara@regional-studies.org)
2. Հիմնադրամի գործադիր մարմնի ղեկավարը՝  
Ռիչարդ Գիրագոսյան,  
անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացած օգնության չափը (դրամական արտահայտությամբ)
3. Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամները՝  
Ռիչարդ Գիրագոսյան, Սեդա Մուրադյան, Սարհատ Պետրոսյան,  
անուն, ազգանուն, հիմնադրամի միջոցներից օգտվելու ձևը, ստացած օգնության չափը (դրամական արտահայտությամբ)
4. Աշխատակազմը՝ 12 վարձու աշխատող – 41,011.0 հազ. դրամ,
5. Իրականացված ծրագրերը՝ Որպես անկախ հետազոտական կենտրոն՝ ՏՀԿ-ն իրականացնում է լայնամասշտաբ ռազմավարական վերլուծություններ և անկողմնակալ հետազոտություններ:
6. Ֆինանսավորման աղբյուրները՝ *2014 թ-ի հաշվետու տարում որպես ֆինանսավորման աղբյուր (դրամական ներհոսք) հանդիսացել են Եվրոպական Միության, Եվրասիա համագործակցություն հիմնադրամ և այլ աղբյուրներից ստացված դրամաշնորհները՝*
  - a) *Եվրոպական Հանձնաժողով – 33,678.6 հազ. դրամ*
  - b) *Բաց հասարակություն հիմնադրամներ (Open Society Foundations) - Ինստիտուցիոնալ դրամաշնորհ – 10,372.5 հազ. դրամ*
  - c) *Եվրասիա համագործակցություն հիմնադրամ, Աջակցություն Հայաստան-Թուրքիա Կարգավորման գործընթացին – 75,196.2 հազ. դրամ*
  - d) *Շվեյցարական ակադեմիական կովկասյան ցանց (Academic Swiss Caucasus Net, ASCN) հետազոտական ծրագիր – 5,550.6 հազ. Դրամ*

7. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը՝ 2014թ-ին ծախսվել է՝ 114,612.0 հազ. դրամ, որից վարչակառավարչական ծախսերը կազմում են՝ 74,182.0 հազ. դրամ:

7.1 Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը՝ Հիմնադրամի միջոցներից կանոնադրությամբ սահմանված նպատակների և խնդիրների իրականացման համար 2014 թ-ին ծախսվել է՝ 114,612.0 հազ. դրամ:

8. Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի անվանումը՝ «Երևան-Աուդիտ Կոնսալտ» ՓԲԸ:

9. Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը 2 թերթից:

10. Հիմնադրամի տնօրեն Ռիչարդ Գիրազոսյան

11. Գլխավոր հաշվապահ

Տիրան Սահակյան





C O N S U L T

« 20 » *Տարբ* 2015 թ.

*«Տարածաշրջանային Հետազոտությունների Կենտրոն» Հիմնադրամ  
2014թ. տարեկան ֆինանսական  
հաշվետվությունների վերաբերյալ*

## ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*«Տարածաշրջանային Հետազոտությունների Կենտրոն» Հիմնադրամի  
հոգաբարձուների խորհրդին և  
Տնօրեն՝ Ռիչարդ Գիրագոսյանին*

### Եզրակացություն ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Մեր կողմից իրականացվել է «Տարածաշրջանային Հետազոտությունների Կենտրոն» Հիմնադրամի կից ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը առ 31-ը դեկտեմբերի 2014թ-ի, հաշվետու տարվա ավարտված համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների

կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

### Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով մեզանից պահանջվում է բավարարել բարոյական վարքի կանոնները և պլանավորել և անցկացնել աուդիտը՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր՝ ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե Հիմնադրամի ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և ղեկավարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Տարածաշրջանային Հետազոտությունների Կնետրոն» Հիմնադրամի ֆինանսական վիճակը առ 31-ը դեկտեմբերի 2014թ., ինչպես նաև նրա գործունեության արդյունքները ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու 2014թ. տարվա համար՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Հաստատված է

<<Երևան-Աուդիտ Կոնսալտ>> ՓԲԸ

Տնօրեն

Լ. Ղոնյան

Աուդիտոր

Լ. Ղոնյան

Որակավորման վկայական թիվ 022703411



<<20>> մարտի 2015թ.